# 2013

## ՀԱՄԱՌՈՏ ՕՐԱՑՈՒՅՑ ՏՈՆԵՐԻ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ (ՆՈՐ ՏՈՄԱՐՈՎ)

### ՀՈՒՆՎԱՐ (31 օր)
ԱՅԾԵՂՋՈՒՅՐ

1 Երեքշաբթի, Գ օր Ծննդյան պահոց: Տարեմուտ և Կաղանդ:
5 Շաբաթ, Ճրագալույց Ծննդյան և Աստվածահայտնության մեր Տեր Հիսուս Քրիստոսի: Նավակատիք:
6 Կիրակի, ՏՈՆ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ: Սուրբ պատարագի ավարտից հետո կատարվում է ջրօրհնեքի հանդես:
7 Երկուշաբթի, Բ օր Ծննդյան: Հիշատակ մեռելոց:
13 Կիրակի, Ը օր Ծննդյան: Տոն անվանակոչության մեր Տեր Հիսուս Քրիստոսի:
14 Երկուշաբթի, Տոն Ծննդյան Հովհաննես Մկրտչի՝ Սուրբ Կարապետի:
19 Շաբաթ, Տոն Թեոդոս Թագավորի և Եփեսոսի մանուկների:
20 Կիրակի, Բ կիր. Ծննդյան: Բարեկենդան Առաջավորաց պահոց:
21 Երկուշաբթի, Ա օր Առաջավորաց պահոց:
26 Շաբաթ, Տոն Սուրբ Սարգիս զորավարի, նրա որդի Մարտիրոսի և տասնչորս վինվորների:
27 Կիրակի, Գ կիր. Ծննդյան:

### ՓԵՏՐՎԱՐ (28 օր)
ԶՐՀՈՍ

2 Շաբաթ, Տոն Սուրբ Սահակ Պարթև մեր հայրապետի:
3 Կիրակի, Դ կիր. Ծննդյան: Նախատոնակ:
5 Երեքշաբթի, Տոն Սրբերի՝ Ղևոնդյանց քահանաների:
7 Հինգշաբթի, Տոն Սրբերի՝ Վարդանանց զորավարների մեր՝ 1036 վկաների, որոնք զոհվեցին Մեծ պատերազմում 451 թ. Ավարայրի դաշտում: Տոն անվանակոչության Նորին Վեհափառության Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ Սրբազնագույն Կաթողիկոսի Ամենայն Հայոց: Սուրբ պատարագից հետո կատարվում է Մաղթանք Հայրապետական: Տոն ազգային:
9 Շաբաթ, Տոն Կոստանդնուպոլսի Սուրբ Ժողովի 150 հայրապետների (381 թ.):
10 Կիրակի, ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ:
11 Երկուշաբթի, Ա օր Մեծ Պահոց:
14 Հինգշաբթի, ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ: Տոն 40-օրյա գալստյան Քրիստոսի ի Տաճարն:
16 Շաբաթ, Զ օր Մեծ Պահոց: Տոն Սուրբ Թեոդորոս զորավարի:
17 Կիրակի Բ կիրակի Քառասնորդական պահոց (Արտաքսման կիրակի):
23 Շաբաթ, Տոն Սուրբ հայրապետներ Աթանասի (373), Կյուրեղի (444):
24 Կիրակի, Գ կիրակի Քառասնորդական պահոց (Անառակի կիրակի):

### ՄԱՐՏ (31 օր)
ՋՈՒԿ

2 Շաբաթ, Ի օր Մեծ Պահոց: Տոն մեր հայրապետ Հովհաննես Օձնեցու և վարդապետներ Հովհաննես Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու:
3 Կիրակի, Դ կիրակի Քառասնորդական պահոց (Տնտեսի կիրակի):
6 Չորեքշաբթի, ԻԴ օր Մեծ Պահոց: Միջինք:
9 Շաբաթ, Օր քառասուն սուրբ մանուկների, որոնք Սեբաստիայում զոհվեցին:
10 Կիրակի Ե կիրակի Քառասնորդական պահոց (Դատավորի կիրակի):
16 Շաբաթ, Օր Սուրբ Գրիգոր Լուսավորչի սոսկալի չարչարանքների և Վիրապը մտնելու:
17 Կիրակի, Զ կիրակի Քառասնորդական պահոց (Գալստյան կիրակի):
23 Շաբաթ, Հիշատակ Ղազարոսի հարության:
24 Կիրակի ԾԱՂԿԱԶԱՐԴ: Երեկոյան Դռնբացեք:
25 Ավագ Երկուշաբթի: Պահք:
26 Ավագ Երեքշաբթի: Պահք: Հիշատակ տասն կույսերի:
27 Ավագ Չորեքշաբթի: Պահք:
28 Ավագ Հինգշաբթի: Պահք: Հիշատակ մեր Տեր Հիսուս Քրիստոսի վերջին ընթրիքի: Երեկոյան ոտնլվա:
29 Ավագ Ուրբաթ: Պահք: Հիշատակ չարչարանքների և խաչելության մեր Տեր Հիսուս Քրիստոսի:
30 Ավագ Շաբաթ: Պահք: Ճրագալույց Սուրբ Զատկի:
31 Կիրակի, ԶԱՏԻԿ: Հարություն մեր Տեր Հիսուս Քրիստոսի: Ուտիք է մինչ Համբարձում:

### ԱՊՐԻԼ (30 օր)
ԽՈՅ

1 Երկուշաբթի,. Բ օր Զատկի: Հիշատակ մեռելոց:
6 Շաբաթ, Է օր Զատկի: Հիշատակ գլխատման Սուրբ Հովհաննես Մկրտչի:
7 Կիրակի, Կրկնազատիկ (Նոր Կիրակի): ԱՎԵՏՈՒՄԸ Սուրբ Աստվածածնի:
14 Կիրակի, Աշխարհամատրան (Կանաչ կիրակի):
21 Կիրակի, Դ կիրակի (Կարմիր կիրակի):
24 Չորեքշաբթի, 98-րդ տարելից Մեծ Եղեռնի բյուրավոր նահատակների մեր, որոնք զոհվեցին 1915 թվականին Արևմտյան Հայաստանում: Եկեղեցիներում կատարվում է հոգեհանգիստ:
28 Կիրակի, Ե կիր.: Տոն Երևման Սուրբ Խաչի:

### ՄԱՅԻՍ (31 օր)
ՑՈՒԼ

5 Կիրակի Զ կիր. Զատկից հետո:
9 Հինգշաբթի, ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ ՔՐԻՍՏՈՍԻ: Տոն Չալթրի եկեղեցու: Հիշատակ փոխադրության Հայրապետական Աթոռի Հայոց Սիսից Սուրբ Էջմիածին Տիրոջ 1441 թվականին: Տոն է ազգային:
12 Կիրակի, Երկրորդ Ծաղկազարդ:
19 Կիրակի, Հոգեգալուստ (Պենտակոստե/,50-րդ օր Զատկից հետո): Բարեկենդան Եղիական պահոց:
22 Չորեքշաբթի, Հիշատակ աշխարհազորայինների և զորավարների հայոց, որոնք զոհվեցին 1918թ. Սարդարապատի հերոսամարտում՝ հանուն հավատի և Հայրենիքի: Եկեղեցիներում կատարվում է հոգեհանգիստ:
26 Կիրակի, Ա կիրակի Հոգեգալստյան: Հիշատակ Եղիա Մարգարեի:
27 Երկուշաբթի: Տոն Հռիփսիմյանց Սուրբ կույսերի:
28 Երեքշաբթի, Ոգեկոչումը հռչակման Հայաստանի Հանրապետության 1918 թվականին: Եկեղեցիներում կատարվում է մաղթանք գոհաբանական: Տոն Գայանեյանց Սուրբ կույսերի:
30 Հինգշաբթի, Տոն Սրբերի՝ Հովհաննես Կարապետի և Աթանագին եպիսկոպոսի: Եկեղեցական հանդես հանուն Սուրբ Շողակաթի: Օր Դոնի Ռոստովի Սուրբ կարապետ եկեղեցու:

### ՀՈՒՆԻՍ (30 օր)
ԵՐԿՎՈՐՅԱԿ

1 Շաբաթ, Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելնելը Վիրապից (301 թ.):
2 Կիրակի, Տոն Կաթողիկե եկեղեցու Սուրբ Էջմիածնի:
4 Երեքշաբթի, Տոն Սուրբ կույսեր Նունեի և Մանեի:
8 Շաբաթ, Տոն Սրբերի՝ Ներսես Մեծ հայրապետի մեր և Խադ եպիսկոպոսի:
9 Կիրակի, Բարեկենդան Սուրբ Գրիգոր Լուսավորչի պահոց, բայց տոներ են լինում:
15 Շաբաթ, Գյուտ նշխարների Սուրբ Գրիգոր Լուսավորչի մեր:
16 Կիրակի, Դ կիր. Հոգեգալստյան:
18 Երեքշաբթի, Տոն Սրբերի՝ Դանիել մարգարեի և երեք մանուկների՝ Սեդրակի, Միսաքի, Աբեդնագովի:
20 Հինգշաբթի, Տոն մեր Սուրբ թարգմանիչներ Սահակի և Մեսրոպի: Ազգային տոն:
22 Շաբաթ, Տոն Սրբերի՝ Տրդատ թագավորի մեր և Աշխեն տիկնոջ և Խոսրովդուխտի:
23 Կիրակի, Գյուտ Սուրբ Աստվածածնի Տուփի:
25 Երեքշաբթի, Տոն Սուրբ Զաքարիա մարգարեի:
27 Հինգշաբթի: Տոն Սուրբ Եղիսե մարգարեի:
29 Շաբաթ, Տոն Սրբերի՝ Քրիստոսի տասներկու առաքյալների և տասներեքերորդ առաքյալ Սուրբ Պողոսի:
30 Կիրակի, Բարեկենդան Վարդավառի պահոց:

### ՀՈՒԼԻՍ (31 օր)
ԽԵՑԳԵՏԻՆ

1 Երկուշաբթի, Ա օր Վարդավառի պահոց:
6 Շաբաթ, Հիշատակ Տապանակի հին և տոն նոր Սուրբ Եկեղեցու: Նավակատիք:
7 Կիրակի, Պայծառակերպություն մեր Տեր Հիսուս Քրիստոսի (ՎԱՐԴԱՎԱՌ): Միջոց ուտիքը երեք շաբաթ է:
8 Երկուշաբթի, Բ օր Վարդավառի: Հիշատակ մեռելոց:
11 Հինգշաբթի, Տոն Սուրբ Եսայի մարգարեի:
13 Շաբաթ, Տոն Սրբերի՝ Թադեոս Առաքյալի մեր և Սանդուխտ կույսի:
18 Հինգշաբթի, Տոն Սուրբ նախահայրերի՝ Ադամի, Աբելի, Սեթի, Ենովսի, Ենովքի, Նոյի, Մելիքսեդեկի, Աբրահամի, Իսահակի, Հակովբի, Հովսեփի, Մովսեսի, Ահարոնի, Եղիազարի, Հեսուի, Սամուելի, Սամփսոնի, Հեփթայեի, Բարակի, Գեդեոնի և այլոց:
20 Շաբաթ, Տոն Սրբերի՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի որդիների և թոռների՝ Արիստակեսի, Վրթանեսի, Հուսիկի, Գրիգորիսի և Դանիելի:

### ՕԳՈՍՏՈՍ (31 օր)
ԱՌՅՈՒԾ

10 Շաբաթ, Տոն Եփեսոսի Սուրբ Ժողովի 200 հայրապետների /431թ./:
11 Կիրակի, Բարեկենդան Սուրբ Աստվածածնի պահոց:
12 Երկուշաբթի, Ա օր Աստվածածնի պահոց:
17 Շաբաթ, Տոն Շողակաթի Սուրբ Էջմիածնի, ըստ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսածի: Նախատոնակ:
18 Կիրակի, ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ: Միջոց ուտիքը չորս շաբաթ է: Խաղողի օրհնություն: Տոն Մեծ Սալայի Սուրբ Աստվածածին եկեղեցու:
19 Երկուշաբթի, Բ օր Վերափոխման: Հիշատակ մեռելոց:
27 Երեքշաբթի, Տոն Սրբերի՝ Հովակիմի և Աննայի, ծնողների Սուրբ Աստվածածնի և Կանանց Յուղաբեր:
29 Հինգշաբթի, Տոն Սուրբ Երեմիա մարգարեի:
31 Շաբաթ, Տոն Սուրբ առաքյալներ Թովմայի,Հակովբի և Շմավոնի:

### ՍԵՊՏԵՄԲԵՐ (30 օր)
ԿՈՒՅՍ

1 Կիրակի Տոն գյուտի Գոտու Սուրբ Աստվածածնի:
2 Երկուշաբթի, Տոն Սուրբ Ստեփանոս Ուլնեցու և Գոհարինեի, Ծամիդեսի, Տուքիկոսի, Ռատիկոսի:
3 Երեքշաբթի, Տոն Սուրբ մարգարեներ Եզեկիելի, Եզրի և Զաքարիայի՝ հորը Հովհաննես Մկրտչի:
5 Հինգշաբթի, Տոն Սուրբ Հովհաննես Կարապետի՝ Մկրտչի, և Հոբ արդարի:
7 Շաբաթ, Տոն Նիկիայի Սուրբ Ժողովի 318 հայրապետների (325 թ.):
8 Կիրակի, Տոն ծննդյան Սուրբ Կույս Մարիամի Աննայից: Բարեկենդան Սուրբ Խաչի պահոց:
9 Երկուշաբթի, Ա օր Խաչի պահոց:
14 Շաբաթ, Տոն Սուրբ Եկեղեցու Սուրբ Խաչի նավակատիքի:
15 Կիրակի, ԽԱՉՎԵՐԱՑ:
16 Երկուշաբթի, Տոն է Խաչի: Հիշատակ մեռելոց:
17 Երեքշաբթի, Տոն է Եկեղեցու:
18 Չորեքշաբթի, Պահք: Տոն է Եկեղեցու:
19 Հինգշաբթի, Տոն է Եկեղեցու:
20 Ուրբաթ, Տոն է Խաչի:
21 Շաբաթ, Տոն է Խաչի:
22 Կիրակի Բարեկենդան Վարագա Սուրբ Խաչի, բայց տոն է լինում:
24 Երեքշաբթի, Տոն Սուրբ կույսերի՝ Փեփրոնեի, Մարիանեի և Շուշանի՝ դստեր Վարդան Մեծի:
28 Շաբաթ, Տոն Սրբերի՝ Գևորգ քաջամարտիկ զորավարի, Ադոկտոսի և Ռոմանոս երգեցողի: Տոն Սուլթան Սալայի Սուրբ Գևորգ եկեղեցու:
29 Կիրակի, Տոն է Վարագա Սուրբ Խաչի (երևացել է 623 թ.): Միջոց ուտիքը յոթ շաբաթ է:
30 Երկուշաբթի, Տոն Սուրբ Դավիթ Դվնեցու և Ղամբեոսի ու Ղամբեուհու:

### ՀՈԿՏԵՄԲԵՐ (31 օր)
ԿՇԻՌ

3 Հինգշաբթի, Տոն Սուրբ իշխանների՝ Սահակի և Համազասպի:
5 Շաբաթ, Տոն Սրբերի՝ յոթանասուն երկու աշակերտների Քրիստոսի:
12 Շաբաթ, Տոն Սրբերի թարգմանիչ մեր վարդապետների՝ Մեսրոպի, Եղիշեի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Կլայեցու: Տոն ազգային և եկեղեցական ի հիշատակ հայոց նշանագրերի գյուտի և Սուրբ Գրքի թարգմանության:
14 Երկուշաբթի, Գյուտ նշխարների Աղվանքի կաթողիկոս Սուրբ Գրիգորիսի և Սուրբ հայրերի՝ Թաթուլի, Վարոսի և Թումասի, Անտոնի, Կրոնիդեի:
19 Շաբաթ, Տոն Սուրբ Ավետարանիչների՝ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի:
21 Երկուշաբթի, Տոն Սրբերի Ղունկիանոս հարյուրապետի, որ հավատաց Քրիստոսի խաչելությանը և Հովսեփ Աստվածահոր, Հովսեփ Արեմաթացու և Քրիստոսի բարեկամ Ղազարոսի և նրա քույրեր Մարթայի և Մարիամի:
27 Կիրակի, Գյուտ Սուրբ Խաչի:
31 Հինգշաբթի, Տոն Սուրբ Հովհաննես Ոսկեբերան հայրապետի:
21 Շաբաթ, Տոն Սուրբ Աբգարի նախավկա և Քրիստոսին անդրանիկ հավատացյալ թագավորի մեր:

### ՆՈՅԵՄԲԵՐ (30 օր)
ԿԱՐԻՃ

2 Շաբաթ, Տոն ամենայն սրբերի՝ հների և նորերի, հայտնիների և անհայտների:
3 Կիրակի, 14-րդ տարեդարձ օծման Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ Ծայրագույն Պատրիարքի և Սրբազնագույն Կաթողիկոսի Ամենայն Հայոց:
9 Շաբաթ, Տոն Սուրբ Հրեշտակապետերի՝ Գաբրիելի և Միքայելի և ամենայն երկնային զորավորների:
16 Շաբաթ, Տոն Սուրբ առաքյալներ Անդրեի և Փիլիպպոսի:
17 Կիրակի, Ժ կիրակի Խաչվերացի: Բարեկենդան Հիսնակի պահոց:
18 Երկուշաբթի, Ա օր Հիսնակի պահոց:
23 Շաբաթ, Տոն Սրբերի՝ Գրիգոր Սքանչելագործի, Նիկողայոս հայրապետի և Մյուռոն եպիսկոպոսի:
30 Շաբաթ, Տոն Սուրբ Առաքյալներ և մեր առաջին լուսավորիչներ Թադեոսի և Բարդուղիմեոսի:

### ԴԵԿՏԵՄԲԵՐ (31 օր)
ԱՂԵՂՆԱՎՈՐ

8 Կիրակի, Բարեկենդան Ս. Հակոբի պահոց, բայց տոներ են լինում:
9 Երկուշաբթի, Աննայի հղությունը Սուրբ Աստվածածնով:
14 Շաբաթ, Տոն Սրբերի՝ Հակովբ Մծբնի հայրապետի, Մարուգե Ճգնավորի և Մելիտոս եպիսկոպոսի:
21 Շաբաթ, Տոն Սուրբ Աբգարի նախավկա և Քրիստոսին անդրանիկ հավատացյալ թագավորի մեր:
23 Երկուշաբթի, Տոն Սրբերի՝ Դավիթ մարգարեի և Հակովբի՝ Տիրոջ եղբայր առաքյալի:
24 Երեքշաբթի, Տոն Սուրբ Ստեփանոս Նախավկայի և առաջին մարտիրոսի:
26 Հինգշաբթի, Տոն Սուրբ առաքյալներ Պետրոսի և Պողոսի:
28 Շաբաթ, Տոն Հակովբ առաքյալի և Հովհաննես Ավետարանչի:
28 Կիրակի, Բարեկենդան Սուրբ Ծննդյան պահոց: